

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

Հ Ա Մ Ե Մ Ա Տ Ա Ս Կ Ա Ն Ն Ս Ա Խ Ս Ա Կ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԵՆԻՑ Մ. ԿԼՂ. ԳԻՐՔ ԹՂԹՈՑ ԱՆԱՆԻԱՅԻ ԿԼԹՈՒՂԻԿՈՍԻ :

(Շարունակութիւն)

Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՈՒԵՆԻՑ.

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ.

Գ. Զայս — լուեալ քաջին Առնայրի ոչ զլաց 1
և 2 ոչ դադարեաց 3 և ոչ ի ձեռն ծառայական Տը-
րեշտակին 5 այլ ինքնին մեծ թագաւորն մեծամե-
ծաւք 4 նախարարաւք և բաղմազունք 5 զաւրաւք 6
զայր 7 հասանայր 8 յաշխարն հայոց, յանդիման
լինէր սկայ ազաւք 9 թագաւորին 10 :

« Իսկ նորա եղբայրաբար սիրով բարեկամու-
թեամբ 11 ընկալեալ 12 բոլոր զինքն 15 առաջի առ-
ներ նմա 14 զներքին և զարտաքին խորհուրդս 15
մերկանայր և զնէր առաջի նորա հանդերձ սրբովն
Գրիգորիւ և ամենայն բազմութեամբ զաւրացն Հա-
յոց, խնարհէր թագաւորն ձեր 1 անկանէր և
պատեր զոտիւք 2 և ձեռաւք 3 պատմէր զա-
մենայն մոլորութիւն հեթանոսաց և ինքն խոստո-
վան լինէր վասն տգիտագործ մեղացն անցելոցն 4
... և ին « էջ » թագաւորն յամենասուրբ 6 ջու-
րքն 7 և ամենայն զաւրքն ընդ նմա 7 և կատարեաց
քահանայապետն 8 ի 9 վերստին ծնունդն 0 ի 11
յերկնաւոր երրորդութիւն 12 ելին ամենեքեան 15
հոգւովն 14 սրբովն :

— Ի նմին ժամանակի շնորհեցաւ նոցա այր մի
երանելի 3 ձեռնադրեալ յեպիսկոպոսութիւն 5 ի
Հոովմ 16 քաղաքէ որ եկեալ էր 17 ընդ Տրդա-
տայ 18 աքային 19 այսու երկնաւոր բարուք 20 :

... Պատմ. Աղ. (ա. որ. խմբ.) գիքք. ա. գլ. ԹԱ. 11 :

Կիտ կաթսուղիկոսը Աղ. Վաչէ արքային :
1. Մ. ոչ զլացաւ : 2. Բն. պակասի. եւ : 5. Բն. Մ.
հրեշտակի : 4. Բն. մեծամեծ : 5. Բն. քաղմազունար : 6. Բ.
զաւրովք : Մ. զօրաւք : 7. Ղ. զնայր : 8. Բն. Ղմի. հասանէր
9. Բ. հսկածաւ : Ն. սկայածու. Ղմ. հսկայազօր, Եփ. Սկայա-
զօր : 10. Բ. արքային Տրդատայ : Ն. թագաւորին Տրդատայ
11. Ղմ. եւ բարեկամութեամբ : 12. Բն. ընկալեալ բարեկա-
մութեամբ : 15. Բն. զբոլորայնովքն : Մ. զբոլոր զնքն :
14. Ն. նմայ : 15. Բն. խորհուրդն :

1. Բ. ծեր : 2. Բն. զոտովք : 5. Բ. զմտովք : 4. Նղմի.
անցելոց : Բ. յանցանաց : 5. Ն. էր : 6. Բ. ամենասուրբ :
7. Ն. նմայ : 8. Ն. քահանայապետն : 9. Բն. պակասի. յ : 10. Բն.
ծնունդ : 12. Բն. շէք. ի : 15. Բն. որդեգրութիւն : Մ. յորդե-
գրութիւն : 14. Բն. յաւելու. լցեալ : 15. Գն. հոգովն :

... Պատմ. Աղ. ա. խմբ. գիքք. ա. գլ. Թ. 19 :

16. Բնդմիծ. յեպիսկոպոսութիւն : 17. Բնի. Հոովմ. Ղ.
Հոովմ : 18. Բն. պակ. էր : 19. Բ. տրդատայ : 20. Բն. արքայի :

Գ. « Ասան այտորիկ 1 լուեալ զօրեղ և
պատուական, արի և քաջ արքայն Աղուա-
նից Առնայր, հետեւէր ի տեսիլ սքանչելեացն
եղելոց, զոր լուաւ և եկեալ ետես զքահա-
նայապետն Աստուծոյ. և զիրս սքանչելեացն
եղեալ և զթագաւորն հաւատացեալ :

« Օհա՛հ հարեալ փառաւորէր զԱստ-
ուածն Տրդատայ զարարիչն զերկնի և երկրի
և հաւատայր յամենասուրբ երորդութիւնն և
մկրտէր ի ձեռաց սրբոյ Առասուրչին Գրի-
գորի Հայոց պատրիարղի երիցս երանելոյ և
խնդրէր Նորին սուրբ ձեռաց ձեռնա-
դրութեամբ Հայրապէս ինքեան աշխարհին :

— « Արու՛մ հաւանեալ ձեռնադրեաց
պատրիարզն Հայոց սուրբն Գրիգորիոս 1 զայր
մի երանելի յեպիսկոպոսութիւն ի Հոովմ 2
քաղաքէ, որ եկեալ էր ընդ Տրդատայ արքա-
լի :

« Օր առեալ զառնայր յաշխարհն իւր
մեծաւ խնդութեամբ, իբրև գտեալ աւար 5
բազում հոգեւոր գանձուց :

« Եւ նոյնժամայն նախանձախնդիր եղ-
եալ սրբոյն Տրդատայ Հայոց թագաւորի՝ սուրբ
այրն Առնայր Աղուանից 4 թագաւորն բառ-
նայր զխաւար կռապաշտութեանց [Ե]լուոյ
աշխարհէն և շինէր եկեղեցիս և հաստատէր
քահանայս և դպրոցս Աստուածաշունչ ուս-
մանց :

1. Ա. Վայսակ.
1. ա. Գրիգորիոս : 2. Բ. Հոովմ : 5. Բ. աւար : 4. Բ.
Աղանիծ :

« Եկն Ուսնայր արքայ 24 եմուտ յաշխարհն 22 Աղուանից, ուսաւ 25 և կատարեաց զնոսա առաքելական կանոնաբ. ընկալան ամենեքեան 24 ՂԵՐՐՈՂԻՆ 25 երկնաւոր 26 և գրեցան ի գպրութեան կենացն: 27

« Իսկ » զկնի սորա (Ուսայրի) մահուանն 28 խնդրեցաւ յԱղուանից մանուկն Գրիգորիս ի կաթուղիկոսութիւն 29 իւրեանց:

« Զի Ուսնայր արքայն յեր խնդրեաց ի սրբոյն Գրիգորա 50 նորին սուրբ 51 ձեռնադրութեամբն լինել եպիսկոպոս աշխարհին իւրոյ:

« Որք 52 և այսու կանոնի կացին աշխարհս 53 Հայոց և Աղուանից համակամ եղբայրութեամբ և անբակ ուխտիւ մինչև ցայսօր: » 54

Արովհետև առաջին խմբին պատկանող թէ գրչադիր և թէ տպագիր օրինակների հիմքն ՉԼԸ (738=1289) թուականի երկաթագիր օրինակն է եղած, ուստի և ինչ թերութիւն ունեցել է սա. նոյնը և անփոփոխ կրկնել են և՛ բնդօրինակողները և՛ տպագրողները: Երկաթագիր օրինակում « Օ ի Ուսնայր... մինչև ցայսաւր » փակագծի մէջ ամփոփուած հատուածը քերած և նոր գրած է, և գրչութեամբ և մեքանով տարբերուում է ձեռագրի գրչութիւնից: Մին և անգամ շատ որոշ կերպով նկատելի է թիւթի միւս երեսից, երբ լոյսի առաջ ես բռնում՝ քերուածքը պարզ ապացուցուում է, իսկ թէ ո՞վ է եղել կեղծողը՝ որ ժամանակից է, և ի՞նչ ղիտաւորութեամբ են կեղծել՝ այս մասին յետոյ: Ահա թէ, եղծուած հատուածը երկրորդ խմբի մէջ ինչպէս ենք գտնում: Պատմ. Աղ. Ա. Գ. թ. (9). Գրչագիր—բոլորագիր և նօտրագիր օրինակներում՝

« Այ թէ ի հարկէ ինչ, կամ թէ առաջ զոյ զՀայս քան զԱղուանս հաշուեցան: »

21. Բնդմ. բարեօր: 22. Բ. արքայ: 23. Բ. յաշխարհս: Ն. յաշխարհոյ: 24. Բնմ. ուսոյց: 25. Բնդմ. ամենեքեան: Փ. ամենեքին: 26. Բն. զըրոյմ: 27. Բն. յաւ. կենաց: 28. Բ. ի ժառանգութիւն երկնից: Ն. ժառանգութիւն երկնից: 29. Բն. մահու սորա: Դմ. սորին մահուան: 50. Բնդմ. կաթուղիկոսութիւն: Ե. կաթուղիկոսութիւն: Փ. կաթուղիկոսութիւն: 51. Դժօ. Գրիգորայ: Մ. Գրիգորէ: 52. Մ. պակ. սուրբ: 53. Մ. որ: 54. Մ. աշխարհս: 55. փակագծած հատուած. ա. խմբ. եղծուած է քերած եւ նոր գրած է:

« Եւ պատուէր կրկին կրկի. ⁵ պատուով զարքեպիսկոպոսն իւր, զձեռնադրեալն ի սրբոյն Գրիգորէ՝ Հայոց պատրիարզէ: »

« Յաղագս որոյ ⁶ և յայս լուսաւորութեան եկաց տեեաց աշխարհս Հայոց և Աղուանից միակամ եղբայրութեամբ, որպէս և կարգեաց սուրբն Գրիգոր. — լեալ ձեռնադրութիւն տանն Աղուանից ի Հայոց Հայրապետէն, որ նստէր յաթու սրբոյն Գրիգորի ⁶ Լուսաւորչին. զամս չորեք մի թ. (440), ի ժամանակս ԻԵ (25) կաթուղիկոսի մինչև ցտէր Արրահամ Հայոց կաթուղիկոս: »

« Այ սակս մեծաքանչ զօրութեանն, որ կատարեցաւ ի Հայք, կամ եղև սոցա կամաւ հնազանդել, ¹ արժանաժառանգ զարմի ² սրբոյն Գրիգորի կոչեցին և հաճեցան: »

Սոյն հատուածը նօտրագիր օրինակում տողամէջ շղագրով գրած է այսպէս՝

« Այ թէ ի հարկէ՝ այսքանս զոր զնգնաձեեցաք, սուտ էր և յետոյ ներմուծեալ ի սնապարծից յօգուտ անձանց, զի ի յայլս պատմութիւնս ոչ զոյ բնաւ, թուի թէ Անանիայ կաթուղիկոսէն յետոյ այսպէս արարին Աղուանից սեպուղիքն: »

Այսպիսի գրութիւնս պատկանում է Միմէօն կաթուղիկոսին, որ մեծ անհանգստութիւն կրեց Աղուանից հակաթու կաթուղիկոսների երեսից: Թերևս երջանակախառնակ Միմէօն կաթուղիկոսը այդ անվերջ գահական կռիւների շնորհիւ լինի արտագրել տուած Մատենադարանիս համար 58 ձեռագիրը՝ որի մէջ է և Անանիայի գրութիւնը: Գրչագրի վերնագիրն է՝

« Գիրք այսինքն Մատենան որ և կոչի թուղթ ընդհանրական Տեառն Ներսէսի կաթուղիկոսի Հայոց, առ համօրէն Հայասեռագինս, որոյ տեսութիւն հաւատացաւ նմա ի տեսանէ: Եւ Հռօմ Ալայն. Ո. (600—1151) թուին: Եւ օրինակեցաւ ի Հայրապետու-

5. Բ. մի կրկին: 6. ... երո: 7. ... պակասի. Գրիգորի: 1. Ն. Կաթուղի: 2. Ն. զարմին:

Թեան Տեառն Սիմէօնի սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց ի սուրբ Լջմիածին. ՌՄԺԶ. (1216—1767) Թուսջ մայիս Լ, 1 Ինչպէս տեսանք Սիւնեաց պատմիչ Օրբելեանը առաջին հատուածից ոչինչ չի օգտուել, նոյնպէս և երկրորդ հատուածից: Այլ միայն սկսում է իւր քաղաւածքը երրորդ հատուածից, որ է այսպէս՝—Ալ էր ի նմա գրեալ ամենայն ճշգրիւ, զի առաջին եպիսկոպոս յԱղ-

ուանս ի սրբոյն Գրիգորոյ Հայոց Լուսաւորէն լինէր ձեռնադրեալ ի խնորոյ Ուսնայրի արքային Աղուանից, 1 և կացեալ ի հնազանդութեան Հայոց աթոռակալացն զամս 440, ի Հայոց առին ձեռնադրութիւն Աղուանից կաթուղիկոսն, զի Հայոցն պատրիարք էր և Աղուանիցն արքեպիսկոպոս, և այս ի ժամանակս քսան և հինգ կաթուղիկոսաց Հայոց մինչ ի տէր Արրահամ: և

Գ. — Ե ժամանակս — Արրահամու Հայոց կաթուղիկոսի 1 բաժանեցան Ախրք ի Հայոց միարանութենէ, ի ձեռն անիծելոյն 2 Կիւրանի 3 Այլ և Յոյնք և յիտաղիա 4 ընդ նոսա 5

«Իսկ 6 Աղուանք ոչ քակտեցան յուղղափառութենէ և ի միարանութենէ Հայոց, զորոյ 7 շքըջաբերական 8 Թղթին 9 վասն Կիւրանի 10 զիմադարձութեան 11 Արրահամ զամբաստանականն 12 վասն նորս 15 յազգս 14 ամենայն ի 15 բաց կտրելով 16 սրով հոգոյն 17

«Ազգէ նախ յԱղուանս 18 տայ զգիտութիւն 19 և գրէ այսպէս ի Թղթին եթէ 20 յառաջագոյն քան զՀայոց աթոռակալութիւն 21 կացեալ աթոռակալութիւնն 22 Աղուանից ընդ 25 մեզ համաձայն գուլով 24 նոցա և կամակցութեամբ. նղովեցար 25 ընկեցար զկիւրան 26 ըստ հրամանի 27 հարցն մեր և Աղուանք:»

«Եւ —) զՀայք 28 Պարսիկք 29 և Յոյնք բաժանեալ էին, և տէր Մովսէս էր յաթոռ 50 սրբոյն Գրիգորի ի Դուռնի 51

Գ. «Աւայ սպա աստանօր յիշատակիս քանզի ի սորին ժամանակս ի բաց կացին վիրք ի միարանութենէ Հայոց և կուրացան շլացան կորողնիք 2 ի պատուիրանէն և Թիկունս 3 զարձուցեալ ապարանեցին հօրն հաւատոյ:»

«Ալ ընտրեցան որպէս ապերախոք և անհնազանդք և հաճեցան լինել 4 կցորդ քաղկեդոնի. փոխեալ զսահման հարցն, Թողեալ զուսուսն մանկութեան և մոռացեալ զուխան Աստուածեղէն:»

«Ալ ի ԺԹ (19). ամին Արրահամու կաթուղիկոսի զտէր Յոհան ի Պոզայովակ, Մօրիկ կայսր Հռոմայեցոց 5 կացուցանէ կաթուղիկոս Հայոց ի բաժնին յուսական կողմանն, ի ժամանակս Արրահամու:»

1. Մ. եպիսկոպոսն:

... Պատմ. աղ. գիթք. Բ. գլ. ԽԸ. 47) երկոցին խումբ: 1. Բմ. կաթուղիկոսի: 2. Ղ. անիծելոյն: Մ. պակ. անիծելոյն: 5. Բն. Կիւրանի: 4. Ղ. յիտաղիայ: Ե. յիտաղա: նմի. իտաղիա: Բ. իտաղիայ: 5. Ն. Սոսա: 6. Բն. Եւ: 7. Բն. զորոց: Փ. որ է: Մ. որոց: 8. Բն. ի շքաբերական: 9. Մ. Թղթոյն: Մ. Թղթով: Փ. Թղթի: 10. Բն. կիւրանի: Փմ. Կիւրանի: 11. Բմ. զիմադարձութեանն: 12. Բն. զամբաստանականս: Ղ. զամբարտա—կանսն: Մ. պակ. զամբաստանականսն: 15. Մ. պակ. վասն նորս: 14. Բն. յալ. յալ. զգրէ. յազգս: 15. Ղ. յաղագս ամենայնի: Մ. եւ յաղագս ամենայնի: 16. Ղ. պ. Ի: 16. Մ. կտրելոյն զնա: 17. Բն. հոգոյն: 18. Ն. Աղուանս: 19. Բն. պակ. տայ ոգիտութիւն: 20. Բն. Եթէ: Ղ. զիմ. եթէ: 21. Բն. աթոռակալութիւնս. Մ. աթոռակալութիւնն: 22. Բն. աթոռակալութեանս: 25. Մ. է ընդ: 24. Բն. զիմ. գտու: 25. եւ նոցա: 25. Ղ. զիմ. նրոզովեցար: Բն. նղովեալ արտաքս: 26. Ղ. զիմ. զկիւրան: 27. Բն. ըստ կամորական հրամանի հարցն, զոր հատին ի վերայ հոռոմն և կացցէ մինչեւ քրոն մեք եւ Աղուանք: 3) Պատմ. Աղ. գիթք. Բ. գլ. ԽԸ. 48) երկոցին խումբ: 28. Փմ. զՀայս: Ն. Հայք: 29. Բ. եւ պարսիկք: 50. Մ. յաթոռն:

1. Փ. Աղվանից: Հանգուցեալ Կարապետ վարդապետ Եսնազարեանը եւ Աղուանից եւ Սիւնեաց պատմութեանց մէջ Աղուանք անունը միշտ ու-ի տեղ Վ. է գործածուած. Աղվանք:»

1. Օրբելեան. Փարիզ. հատոր Բ. գլ. ԺԲ. (52) երես 22.: Մոսկվա. ԺԱ. 51) երես. 204:

2. ... Նոյնպէս: Թերես գոռոզնիք—հալարոք: 5. Բ. Ի Թիկունս: 4. Բ. լուսանցքուս: անկ. Լ. 17: 5. ... հոռոմայեցոց:

եւե կողման 52 Թունաց հակառակ ի 53 նմա նստուցին զՈ՛հան 54 ոմն մերձ առ նա և Էն:

եւե սակա 55 ինն դասակարգութեան գլխաւորք 9 եկեղեցական 57 անձնաճաճ կամաւ 58 ըստ նպիրտ 59 բարուց 10 Հայաստանեայցն: 11 կարգեն 42 զԱրրաճամ պատրիարք: 13 և զաղուանիցն արքեպիսկոպոս: 14 և զԱրացն Նեաքոպողիք: 15 խեռացաւ 46 վրացն որում Կիրոն 17 կոչէին: և զհակառակութիւն բերէր 48 վճիւռ: 49

« Իսկ 1 Հայրապետն Արրաճամ ասէր լինել 2 յառաջահաւատ քան զվիրս զԱղուանս: 5 Եւ նոցա անկէ եպիսկոպոսապետութիւն: 1 յայսմ 3 մաքրամանէ և ի խնդիր ուղղափառ 6 հաւատոյ դարձան վիբք և եղեն քաղկեդոնիտք: 7

« Իսկ զերկուանայն 8 Հայրապետութեան 9 խոտեցին տեարքն Սիւնեաց: և ոչ հաւանեցան ընդ մի զք յերկուցն: 10 հրամանաւ եպիսկոպոսին իւրեանց առաքինոյն 11 Պետրոսի: Ար հասեալ ի վախճան 12 պատուէր ետ վիճակին իւրոյ 13 առնուլ ձեռնադրութիւն յԱղուանից: 14 Եւ զմիւսոնն 15 արքնութեան մինչև միացի աթոռ սրբոյն Գրիգորի:

« Ասան այսորիկ 16 ձեռնադրեցաւ Արթանէս 17 յեպիսկոպոսութիւն 18 Սիւնեաց: ի զաքարիայ 19 սուրբ 20 Հայրապետէն Աղուանից: ընդ նմին և զիւզըն արքնութեան 21 ամ յամէ: 22 առնուին 23 սիւնիք 24 յԱղուանից: Մինչև բարձաւ հակառակութիւնն: և միապետեաց Արրաճամ զՀայրապետական 25 աթոռն:»

« Իսկ Սիւրբին 1 Արաց արքեպիսկոպոսըն յաղագս զղղղն պատճառի՝ աղագաւ փառամոլութեան բաժանեալ ի Հայոց խոստովանէր զազանդն քաղկեդոնի:

Ար բազում անգամ զրեցաւ առ նա տէր Արրաճամ Հայոց կաթողիկոսն՝ դառնայ նմա ի մոլար ձանապարհէն: և ոչ կամեցաւ: զի յոյժ ներկեալ էր աղանդովն 2 քաղկեդոնի:

« Եւ յերկիկեղկել Հայրապետութեանն Հայոց վաղձանէր մետրապօլիտն 5 Աղուանից: ձեռնադրեալն յԱրրաճամայ Հայոց կաթողիկոսէ:

« Իսկ տանն Աղուանից նշկահեալ զանմիաբանութիւնն Հայոց: նախանձեալ ընդ Սիւրբին 4 և ինքեանք ձեռնադրեցին ինքեանց կաթողիկոս: և շաղեցան սուղ ինչ ժամանակս՝ զամս ԽԷ [28]: մինչև ի վաղձանելն 3 տեսուն Արրաճամու և տեսան Յովհաննայ երկուս 6 միայն լեալ ի տանն Աղուանից անձամբ կաթողիկոս:

51. Բղ. Դրանի: Փ. Դվի: Մ. Դուին: 52. Բն. կողմն: Փ. ի կողմն: Մ. կողմանք: 53. Բնիմ: նմա: 54. նմ. զԹովհան: Բփ. զԹոնան: 55. Մ. Դ սակա: 56. Մ. գլխաւոր: 57. Ղ.ժ. եկեղեցականք: Բ. եկեղեցոյ: 58. Բնփ. կամօք: Ե. կամաւք: 59. Բն. նըպիրտ: Եփ. սիրտ: 40. Բ. քարոյն: 41. Բ. Հայաստանաց: Նղ. Հայաստանեայցն: Մ. Հայաստանեայց: 42. Բ. կանգէն: 43. Նղփ. պատրիարք: 54. Բղչփմ. արքեպիսկոպոս: 45. Բնղփ. մետրապօլիտ: Մ. մետրապօլիտ: 46. Բնղմ. խեռեցաւ: 47. Բն. Կիրոս: Եփմ. Կիրոն: 48. Ն. րներաւ: 49. Բնղչփմ. վճիւռ:

1. Ղ.ժ. յաւելուն: Սուրբ: 2. Ղ. լինի: 5. Ղ. զաղուանս: 4. Ե. եպիսկոպոսութիւն: 5. Մ. յայսմ: 6. Բն. ուղղափառութեան: 7. Բն. քաղկեդոնիկ: Ղչփմ. քաղկեդոնիտք: 8. Ն. զերկուանայ: Փ. յերկուանայն: 9. Փմ. Հայրապետութեան: 40. Ն. ի յերկուցն: 11. Ղչփմ. առաքինոյն: 12. Նղփմ. վախճան: 13. Բնմ. իւրում: 14. Բն. յԱղուանս: 15. Բ. զմիւսոնն: Ն. զմեոնն: Մ. զմեոն: Ղ. մեոնն: 16. Բն. այսորիկ: 17. Ղփմ. Արթանէս: 18. Բնղչփմ. եպիսկոպոսութիւն: 19. Փ. զաքարիայ: Բ. զաքարիոսէ: Ն. զաքարիայէ: 20. Մ. պակասի: սուրբ: 21. Ղ.ժ. րնութեան: Փ. պակ. օրնութեան: Բ. օծութեան: 22. Բն. առնուին ամ յամէ: 23. Ն. իւս. առնուին: Ն. 24. Ն. Մինիք. կրկնութիւն: առնուին սիւնիք ամ յամէ սիւնիք յԱղուանից: 25. Բն. Հայրապետականն աթոռ:

1. բ. Կիրոն:
2. ս. յաղանդովն: 5. ս. Նետրապօլիտն: 4. բ. Կիրոն: 5. բ. Ե վախճանն: 6. ս. բ. բա:

Այս հատուածի մէջ այսքանս միայն նկատելի է, որ Աղուանից պատմիչը յունական բաժնի Յովհանն Գ. կաթողիկոսին Մովսէս Բ. Եղիվարդեցի կաթողիկոսի ժամանակն է դնում. իսկ Գլխիք թղթոցի մէջ ինչպէս և մեր միւս պատմագրաց մէջ Յովհաննը Արքահամ կաթողիկոսի ժամանակն է հակաթոռ նստել:

Սոյն հատուածից Օրբելեանի քաղուածքն է՝
 «Ապա մինչ աղմուկ լինէր ի մէջ աշխարհիս, և Յովհանն ոմն ի բաժին Յունաց հակառակաթոռ էր նստեալ, և վասն ինն դասուցն ի Յունաց ինդիր առ Հայս, և Ալուրիոն Ալաց կաթողիկոս վասն փոռամոլ ախտի ի բաց եկաց ի Հայոց և քաղկեդոնիկ եղև: Այնուհետև բաժանեալ ի բաց եկաց և Աղուանիցն պատճառելով և նա պատճառս ինչ»:

(Շարունակելի)

ԴՍ. Կ.



ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՍԼՍԸՆԵԱՆ ՏԷՐՈՒԹԵԱՆ.

Թ. ՆՆՕԼԴԷԶԸ.

(Շարունակութիւն)

Եստորով Բ, որի մականունն է Պարուէզ (Ապրուէզ), Յաղթական, զուր քանաց Աահրամին իւր կողմը քաշելու, Սա կամենում էր ինքն իշխել յանուն մի անչափահաս արքայորդու և կամ աւելի ևս յանուն իւր, Խոսրովը նրա զինացն ելաւ, սակայն նրա զօրքն էլ հաւատարիմ չմնաց իրեն, Անուանի զօրավարն աւելի յարգանք էր աղչում, քան թէ անարի արքան, ուստի և թողին նրան հէնց առաջին լուրջ չափատամարտից յետոյ, Խոսրովը փախաւ իւր ընտանիքով և մի քանի հաւատարիմներով Ասորիք հոռոմների մօտ, Սահմանագլխի Կիրկեսիում (Circesium), քաղաքը հասնելով նա մի աղերսական նամակ գրեց և օգնութիւն խնդրեց Վորիկ կայսրից (Mauricius, իշխում էր սկսած 14 օգ. 582 թ.), Սա ճարպիկ չեղաւ այս անսովոր բարեխաղոջ հանգամանքներից իւր տէրութեան համար օգտուելու: Վորիկը յանձն առաւ Խոսրովին յետ տանելու և իւր գահի վրայ բազմեցնելու առանց իւր համար մի դահացուցիչ վարձ ապահովելու, Ինչպէս հասարակ

ձագուցից առաջ եկած մի մարդ՝ հաւանօրէն նա արդէն իսկ շողորորթուած էր համարում իրեն, որ կարող է հետգոյն արքունի ցեղի մի շառաւիղ՝ օրինական թագաւորի կրկին իւր գահի վրայ նստեցնել և իրեն նրա «հայր» հրատարակել, Աահրամն այդ միջոցին քիչ տատանումից յետոյ ինքն իրեն արքայ էր հրատարակել տուել և իւր անունով զբաժներ կտրել, նա կարողացել էր Բինդոյէին իւր ձեռքը ձգել, Սակայն Աահրամի գահը տատանուում էր հէնց սկզբից, Մեծամեծները նրան իրբև իրենց հաւասարի չէին հնազանդում, Մինչև իսկ պարթևական իշխանութեան մէջ, ինչքան էլ շուտ շուտ թագաւորներին գահալէժ էին անում և թագաւորներ էին նստացնում, միշտ աչքի առաջ էին ունենում, որ միայն արշակունի լինի թագ կրողը, այսպիսի օրինապահական տեսակէտ աւելի ևս զօրաւոր էր Սասանեանց ժամանակ, ժողովրդական հասկացողութեամբ «չն արքայական վեճափառութիւնը» (Յառոտահի Վայանիկ) կապուած էր Արտաշրի տան հետ և այլ ոք կարող չէր երբէք թագաւոր լինել, նոյն իսկ Տիգրանում մի ապստամբութիւն ծագեց, որ Աահրամը թէպէտ և ընկձեց, որի միջոցին սակայն Բինդոյէն փախաւ յօգուտ իւր քեռորդու աշխատելու, Արդէն 591 թուի սկզբին մի կայսերական բանակ յառաջ էր անցել, Խոսրովին կրկին գահի վրայ նստեցնելու համար, Մարտիրոսոպոլիսը (Նիքիերտ), որ քիչ առաջ դաւաճանութեամբ պարսիկներին ձեռն էր ընկել և արդէն բաւական երկար ժամանակ պաշարուած էր, թող տուաւ Խոսրով հոռոմներին յանձնելու, նոյնպէս և Գարան, Մժքնի մօտ պարսիկ բանակը միացաւ արդ Խոսրովի հետ, Ամենայն օր գալիս և միանում էին նրա հետ պարսիկ մեծամեծներ և զբանց թուում և հայ նախարարներ, Այլ զնգեր էլ գալիս և յարում էին օրինաւոր թագաւորին: Ազրէյջանում (Ատրպատական) Արտամը մի բանակ ժողովեց Աահրամի ընդդէմ, Հոռոմ—պարսկական զլիաւոր զօրարանակը Տիգրիսի ձախ ափով նրա առաջն էր ընկանում, Բայց գեռ մինչև բանակների ընդհարումն մի արքունի նախադարձակ խումբ Միջագետքի անապատով ուղիղ ճանապարհով հասել և զբաւել էր Սելևկիա, Տիգրան և Կոր—Անտիոք մայրաքաղաքները, Ամէրքն էլ օրինաւոր թագաւորին էին յարում: Եւ վճռական ճակատամարտում Զարի շրջակայքում Աահրամը կոր ի դուռն ջարդուեցաւ (591 ամառը), նա փախաւ թիւրքերի մօտ, որոնք նրան պատուով ընդունեցին, բայց ուր քիչ ժամանակ յետոյ սպանուեցաւ, Հոռոմները Խոսրովին Տիգրան տարին, Հոռոմների և պարսիկների մինչև այդ խաղաղութիւնն ինքն ըստ

• Տես Արարատ, № 1 1896.